

ճշգրիտ Դեմոսթենես անձի պատկանող ամեն ճրիւղ
ճոխ մարդ, որ նախարարութեան մասնակցելու
արժանընտիր կը հռչակուէր ճիշդ այն միջոցին՝
յորում իւր հուսակցութիւնն ընտրութեանց
մէջ յաղթանակելով իշխանութիւնը ձեռք կառ-
նայր։ Սրբ Զարիւղ Տիւք իւր ասպարէզն սկսաւ
մեծամեծ ճամբորդութիւններով, և արդարա-
յոյց իւր վրայ այն առածը որ կըսէ Վամբորդու-
թիւններն երիտասարդութիւնը կը յինեն, և ըն-
տիր ունեցից ունելով իրեն հանգուցեալ Գ.
Հէրվուրթ Տիքսոնը չըլադայեցաւ հետզհետէ
Միացեալ Նահանգներն, յետոյ Աւստրալիա,
Նիւ Զելանտիա, Հնդկաստան, Եգիպտոս։ Այս-
պէն աշխարհիս թուրքիք չըլան մի կատարե-
լով, վերադարձին երկհատոր մատեան մի հրա-
սարակեց իւ օգտակար տեղեկութիւններով որք
կը յայտնեն ցեղային անդհեցութիւններն կառ-
վարութեանց վրայ, և կլիմայի անդհեցութիւն-
ներն ցեղերու վրայ։ Այս երկուհատորներն որք
գրական աշխարհը գործեցին և մեծ յաջողու-
թիւն գտան, Հեղինակին ընտրութիւնը արդ-
եամբք փութացուցին, իւր վրայ հիմնուած
յոյսերն իւրպէս արդիւնաւոր եղան խորհրդա-
րանին մէջ։ Մանսունդ գաղթականութեան և
արտաքին աշխարհավարութեան խնդիրներու
մէջ իբրեւ առեւտրական՝ շարունակ յառաջադի-
մութիւններ ըրաւ, որոնք ստուգիւ նշանակու-
թեան արժանի են։ Արեւելեան խնդրով վրայ իւր
վերջին ատենախօսութիւններն գինքն անհաւա-
սար հանդիսացուցին, և համըսկան շնորհաւո-
րութիւններով պատկուեցան։

նեղու մասին, սակայն և հնարին չէ, սեւ թէ որ և իցէ միջոց գործադրուած է: Վերջին պատե-
րազմին հետեւանք եղող սովակալի սովն հնձոց
անյաջողութենէ, և գաղթականութիւններէ
զատ ուրիշ ազդեցական պատճառներ ևս ունի որք
են քուրդերու աւերումներն, հարկահանու-
թեանց բռնութիւններն, դրամոց արժէքի կո-
րուստը, տեղական իշխանութեանց յուս-
տակարարութիւն ի մասին արմտեաց բաշխման
և այլն: Այնպէս որ եթէ Անգղիոյ հանգանակու-
թեանց արդեամբք մեր հիւպատոսներն ուտե-
լիք չբաշխէին, սովամահներու թիւը զգալի կեր-
պիւ պիտի աճէր: Թուրքիոյ կառավարութեան
արդի կարողութենէ վեր է սովին դարման բե-
րել, հետեւաբար բարենորոգմանց խնդիրն ևս
երեսի վրայ կրնայ:

Այս ամենու իրական դարմանը գաւառներու
վարչութեանց ձեռնարկման բարենորոգու-
մը միայն կրնայ լինել. և այս մասին Բ. Դուռն
Բանձնախումբերով կառնեցաւ գործին ձեռնար-
կութիւն ընել: Այս Բանձնախումբերէն մի քա-
նիկներն արդիւնք չունեցան, սակայն Տիգրա-
նակերտի Բանձնախումբն բաւական յաջողեցաւ
իւր պաշտօնին մէջ, չնորհիւ իւր նախագահ Ա-
պէտին բաշայի, որոյ համար գահութեամբ կ'ի-
մանամ թէ արտաքին գործոց նախարար կար-
գուած է: Այս Բանձնախումբերու տեղեկագի-
րերն Անգղիական կառավարութեան չեն հա-
ղորդուած: Իսկ Բ. Դուռն նոցա առաջարկու-
թեանց գործադրութեան մասին թերեւս միջոց
մի ձեռք առած չըլլայ: Լորտ Կրանֆիլդ շա-
րունակելով իւր խօսքն Անգղիական նախորդ-
աշխարհավարութե ձեռն ապարդիւն գտնուիլն,
և Թուրքիոյ կողմէ եղած քաղաքական խոստումն
անգործադրելու մնալը յիշելով՝ ամբական Ժո-
զովրդոց ողբալի վիճակը կընտրկայէ և միջոցնե-
րուն անբաւական լինելն կըհաստատէ, յորմէ
հետեւեցնելով կ'ըսէ թէ Անգղիական կառավա-
րութիւնն ստիպուեցաւ հրաւիրել մեծ տէրու-
թիւններն որ միմեան պահանջեն Բ. Դուռնէն
Պէրլինի գաշնագրին 614-րդ-ումի գործա-
դրութիւնը:

Լորտ Կրանֆիլդի բանախօսութիւնն ծափահա-
րութեամբ ողջունուելէ զինի՝ լորտ Սալիզբըրի
խօսք առնելով յայտարարեց թէ Թուրքիոյ բա-
րենորոգմանց նկատմամբ եղած խօսքերն որքան
որ ճիշդ եղած լինին, բայց և այնպէս իրական
դարման մի գտնուելու մասին ինք կըտարակու-
սի: Թէ և ամեն չարիք իւր դարմանն ունի: սա-

նութեանց մէջ ինքն կ'երեւի անմիջամտութիւնը
հաստատող քաղաքականութեան ոչ թէ իբրեւ
դրական պաշտպան, այլ կատարեալ ջատագով
Անգղիական օրինաւոր ազդեցութեան եւրոպիոյ
խորհուրդներու մէջ: Կրթութեան խնդրոյն մէջ
ինքն է հեղինակ գալոցական խորհուրդներու
գրութեան, որ Պ. Պորթլըքէն ընդունուելով,
1870ին հրատարակուած կրթական ծրագրին
ամբողջացուցիչ մտքը կազմեց և շատ նշանա-
ւոր օգուտներ ընծայեց: Սըր Չարլզ Տիլք հա-
տարակապեցական ձեռն վրայ իւր գաղափարնե-
րու նախապատուութիւնը երբէք թաղուն չի-
պահեց, և Պ. Կամպելօյի հետ իւր բարեկամու-
թիւնն արդէն քաջայայտ է: միմիայն այս վեր-
ջերս յայտնեց ինքն թէ՛ երկրի մը միապետու-
թիւնը տապալելու երբէք պատճառ մի չգտնե-
րովհետեւ միապետութիւնը որեւիցէ ընդարձակ
ազատութեանց և ոչ միոյն գործադրութեան
արդեւք չէ: Սըր Չարլզ Տիլք նպաստաւոր է
նաեւ կանանց քաղաքական ազատութեան կար-
ծեաց, Տէր է նաեւ բազմաթիւ պարբերական
թերթերու, որոց մէջ է նաեւ Լոնտոնի Աթէնէ-
ոսի թերթը, և Անգղիոյ գրագէտներու մէջ
ամենէ աւելի կ'անուի զրիշներու կարգը դաս-
ուած է: Իւր հանճարալից երգիծաբանութիւնն
«Մոնաքոյի ճիւղերը» ըն իշխանին անկումը՝ քրան-
սերէնի թարգմանուած է: 37 տարեկան է, և
Անգղիոյ արդի քաղաքագէտներու մէջ աւելի
նշանաւոր տեղ բռնելու միշտ յառաջադէմ:

(Պիտի շարունակուի)

կայն այս առաւն Թուրքիոյ համար արդարանալ
չկարծեր: Կրգովէ արտաքին գործոց նախարա-
րին այն գործն որով մեծ տէրութիւններն կը-
հրաւիրէ միաբան գործել Պէրլինի Դաշնագրի
յօդուածներն լրացնելու համար: Բայց թէ այդ
միաբանութիւնն մինչև որ աստիճան պիտի տե-
ւէ և նոյնիսկ մնայուն միաբանութիւն մի մինչև որ
աստիճան պիտի կրնայ իւր առաջադրած նպա-
տակին մէջ յաջողելու, ինքն չկամիր ընել,
այլ ապագային յայտնելու բանն է: Լորտ Սա-
լիզբըրի-Թուրքիոյ կառավարութեան վրայ իւր
մի քանի դիտողութիւններն յարեւէ զինի, կ'ի-
մացնէ թէ իւր կարծիքն է որ եւրոպական վեց
տէրութիւնք եթէ համամիտ և համախորհուրդ
գործեն անգամ պիտի չյաջողին բաղձադրած
նպատակին հասնելու, բնորոշ իւր ունեցած
փորձառութեան վրայ յիշելով չկրնար յուսալ
թէ Թուրքերն յօծարին խղճի մտքը գործա-
դրել բարենորոգումներն որք իրենց համար
անձնատապալութենէ ուրիշ բան չեն: Իրական
բարոյքում յառաջ բերելու համար պէտք է
մէկըլի գտնել Թուրքիոյ կառավարութեան կող-
մէ ըլլալիք որեւէ գործողութեան մի ազդեցու-
թիւնն և այնպէս աշխատիլ: Մեր հոկոյնութիւնք
պէտք է տարածուին այն եղբրքներն որ կ'ը-
րոնական գործութիւնն հասնելու առաւելական
կրգունուի: Այնպիսի տեղերու իշխանութեանց
քով մի մի անոյ դիական քաջատնտաւոր դրուելով
կարելի կըլինի սակաւ առ սակաւ զեղծութեանը
զսպուել այլն: Այս գրութեամբ Թուրք պաշտօ-
նակալը հիւպատոսական ազդեցութեանց ներ-
քե գործել պիտի հարկադրին, և այն ժամա-
նակ պիտի ճանաչեն թէ անգղիացի հիւպատոս-
ներու յանդիմանութիւններն արհամարհել կա-
րելի չէ: Թուրքիոյ բարենորոգումներն իրացնե-
լու համար իւր առաջարկած սոյն եղանակին
դանդաղ լինելն խոստովանելով հանդերձ՝ լոբո
Սալիզբըրի յոյս կըտածէ թէ՛ որ մի Թուրքերն
լուսաւորուելով շատ մեծ օգուտ յառաջ գալ
առանց որեւէ վտանգի: Եւ եթէ այս եղանակն
չգործադրուի, չորս Բանալընի գուշակած ազ-
գերու ջնջումը կըհետեւի: Վերջապէս Արիական
Ժողովրդոց կրած բոլոր թշուառութեանց պատ-
ճառ Ռուսոս-Թուրքական պատերազմն է, կ'ըսէ,
և կըհետեւեցնէ թէ՛ ամեն որեւիցէ բռնու միջոց-
ներն ոչ միայն օգուտ չեն բերեր այլ այն ազգե-
րու ջնջումը կըթելադրեն:

Սոյն բանախօսութեան Արկայի դուքսն խիստ
կծու կերպիւ պատասխանեց յայտարարելով թէ

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ
(Տես լրագրոյս Գալսերացի քիւր):

Մեր երիտասարդներն, որք արդէն աշխա-
տութեան հասակին մէջ կըգտնուին, պէտք է
աշխատին կորովի կերպով եթէ երբէք դէպ ի
կարեւոր նպատակ մի ուշադիր են: Աննպատակ
քաղող Ժողովուրդներն կորուսած են, պատմու-
թեան մէջ միայն իրենց անունը թողով: Անը-
պատակ ազգիւն արդէն ապրիլ չէ: Արդ եթէ
մեր անգործ երիտասարդք ապրիլ կ'ուզեն,
պէտք է նախ ապրելու նպատակին ինչ լինելը
ճանաչեն: Ապրելու նպատակն մարդկութեան
կոչումն է, մարդկային արժանապատուութեան
իրացումն է, թէ որ սոյն կոչումն, և սոյն ար-
ժանապատուութենէ դուրս պիտի ապրի մէկն,
նորա կեանքն հաւասար է անասնային կեանքի:
որուն մէջ զգայարաններն յագեցնելէ ուրիշ
նպատակի զգացում չտիրեր: Իսկ մարդն, որ ի
բնէ կ'իմանայ անսահմանութեան դաղափառն,
ի բնէ կ'զգայ նաեւ իւր յաւիտեական կոչումը,
առաքնութեան բարի, և մոլութեան չար լի-
նին, բարւոյն ախորժելի, և չարին խորշելի
լինին: մարդն, կ'ըսեմք, եթէ իւր մարդ լի-
նին չմտածայ պարտաւոր պիտի զգայ զինքն
անմիջապէս ճանաչել իւր նպատակն, և ըստ
նոյն ուղղել և տնօրինել իւր կենաց ժամերն:
Երիտասարդք, որ իրենց ազնւ ունին անմահ
ասպարէզ մի, կըպարտաւորին արշաւել թուա-
նալ և յետո կատիլն, ժամանակը կորսնցնել է,
և ժամանակը կորսնցնելն մահ է: Այսպիսի կա-
րեւոր է աշխատութիւնն երիտասարդաց: Բայց

Անգղիոյ ախորդ արտաքին գործոց պաշտօնե-
ին կողմէ արտաստուած խօսքերն անտեղի էին
զի Թուրքիոյ բարենորոգման ամեն յոյս իսպառ-
կբառնայ, Եւրոպիոյ կողմէ ճնշման որ և է
գաղափար կըմերժէ: Արկայի դուքսն Պէրլինի
գաշնագրին 614-րդ-ումը կարգաւոր կըյիշե-
ցնէ նմա թէ՛ ինքն իբրեւ արտաքին գործոց
պաշտօնեայ այն ժամանակ գաշնագրին ներքե
Անգղիոյ տէրութեան կնիքն դնելով մեծ պար-
տաւորութիւն և մեծ պատասխանատուութիւն
ստանձնած էր բարենորոգումներն գործադրելու
համար, և սակայն իւր բանախօսութեան մէջ
ոչ մի ակնարկ չըներ այս մասին: Մինչդեռ
գաշնագրին ստորագրող տէրութիւնք պարտա-
ւորած են իրենց վրայ գործադրել նոյն յոգ-
ուածներու տրամագրած բարենորոգումներն:
Արկայի դուքսն կարեւոր տարբերութիւն մի
ցոյց կուտայ Բարիքի և Պէրլինի գաշնագրու-
թեանց մէջ: Առաջինը կըպահանջէր որ ստորա-
գրող տէրութիւնք աշակցութեամբ պէտք էին
աշխատիլ, իսկ երկրորդն կըտրամադրէ որ ստո-
րագրող տէրութեանց իւրաքանչիւրն ուրոյն
իշխանութիւն ունի անհատապէս մեծաժողով լի-
նել բարենորոգմանց իրացուցման գործոյն:
Այնէ ծագեցաւ այն դրութիւնն որ եթէ տէ-
րութիւնք չհամաձայնին անոնցմէ մին գործելու
պարտաւոր կ'ընայ, զտանգ մի է այս որ լորտ
Սալիզբըրի չնորհիւ ծաղումառաւ ճիշդ այն
ժամանակ յորում նախայարձակ գտնուեցաւ
նա, և մերժեց Պէրլինի վեհաժողովին ուղղալ
Թուրքիոյ առաջարկն 1878 Յուլիս 10ին որով կը-
խնդրէր որ տէրութիւնք ոչ թէ առանձնակի
այլ միաբանութեամբ գործեն: Սոյն մերժման
արդիւնքն եղաւ գաշնագրին կնքուիլն առանց
պարտականելու յօդուած մի որով ի հարկին տե-
րութիւնք համաձայն գործելու պարտաւոր լի-
նէին: Ռուսի և Երբի նախարարութիւնն ստիպա-
ուեցաւ այժմ տէրութիւններն հրաւիրել ի գոր-
ծադրութիւն գաշնագրին, որուն անկեղծ կը-
փափագիմք, և այս մտքին մեր առջեւ ելլալիք
գործադրութիւններն մեր նախագահ աշխարհա-
վարութեան արդիւնքն են, և որուն համամիտ
արդի Պաշտպանականք իրենց բանախօսութեք
կ'ուզեն հերքել բարենորոգմանց յաջողու-
թիւնը որ տէրութեանց միաբան գործելով
պէտք է ձեռք բերուի:

Այս խօսքերէ զինի Արկայի դուքսն յարեց
թէ՛ լորտ Սալիզբըրիի հարծեաց հակառակ ի-
րենք լի են յուսով որ եւրոպական տէրութեանց
միաբան գործակցութեամբ Պէրլինի գաշնա-

որպէսզի երիտասարդաց աշխատութիւնն ուղ-
ղապէս յարմարութիւն ունենայ իրենց նպատա-
կին պէտք են գիտել նախ իրենց նպատակն:
որ չէ այլ ինչ՝ բայց միայն առաքնին և բարե-
կիրթ մարդ լինել: Երանի այն ազգիւն, որ առա-
քնին և բարեկիրթ երիտասարդներ ունի, եթէ
ազգաց կազմութիւնը մանկուն ընտրէ, երիտա-
սարդներէ և ծերերէ կըբաղկանայ, և սոցա մե-
ջէն միայն երիտասարդք են գործող տարրն,
ապա ազգ մի որ ընտիր երիտասարդներ ունի,
որքան լաւ և ինչպէս պայծառ նպատակի
դիմող կըդառնայ: Ընդհակառակն, երեւա-
կայնք ազգ մի որոյ երիտասարդներն թոյլ
փափկամորթ և անգործասէր են, որոց մէջ
գտաւարկութիւնն, որ ամենայն չարեաց մայր
է, կըտիրէ: Ընչ կարող ենք ասել այդպիսի
ազգի համար: ոչ ապաքէն յետագէմ, կամ
կորուսած Ժողովուրդ մի է: Ըստորում՝ ծերերն
գործելէ դադրած են: մանկունք գործելու
չակած, և երիտասարդաց անգործութիւնը օ-
րինակ իրենց առջեւ: գործող ո՞վ է այդպիսի
ազգի մէջ, Եւ երբ գործող չգտնուի ազգի մէ-
մէջ, հարկաւ այն ազգը կըկորնայ: Կըկորնայ
նաեւ մեր ազգը եթէ ատեն ատեն գործողներ
չունենար:

Վարդանանց ժամանակ մեր ազգի ընդհանուր
կորստեան վտանգ մի կար: որոյ առաջին չէին
կարող առնել ժամանակին ծերերը, զի իրենց
հասակին մէջ արդէն բնութիւնը կատած էր:
Իսկ մանկունք չէին կարող գիտել թէ ինչպիսի
ղութիւն բռնել պէտք էին: Ուրեմն ո՞վ զար-

գրին գործադրութիւնն կ'արդիւնանորի :
Լորտ Քանալընի հանդիման վրայ բացուած վի-
ճարանութեան վերջ տունն Սըմբրութի դ. քսին
և Պաթհի Մարքիզին բանախօսութիւնքն :

Անգղիոյ հասարակաց խորհրդարանին մէջ մի
քանի անախորժ դէպքեր տեղի ունեցեր են :
Ասկէ առաջ դէպքի տեղի ունեցան իրանեացի
երեսփոխանաց կողմէ թշնամանուած էր : այս
անգամ Պրնտոյ երեսփոխանն խորհրդարանէն
բռնի դուրս հանուած է նախագահի հրամանին
չհնազանդելուն և երգումը բնել մերժելուն :

Կ'ըսուի թէ՛ Սըր Սըրիք—Ռիլմ մտադիր է
ներկայացնել Անգլիոյ խորհրդարանին մի նախ-
մանական դիրքի կ'ընդունուի թէ՛ ամեն ուր
խօսքով կամ հրապարակաւ, դրով կը յայտնէ
իւր Գերագոյն էակի մը չհանապաղ, պիտի չի-
կրնայ խորհրդարանին մէջ պայտօն վարել :

Երեսփոխանաց ժողովն Պրնտոյի վերոյիշ-
եալ ընթացքն դատելով բանադրութեան դա-
տապարտելէն զինի, Յունիս 24 (Ն. Տ.) քուէի
դրաւ ինդիւրն և Պրնտոյ իւր իրանուէր ու-
նենալը հաստատած լինելուն պատճառաւ բան-
տէն արձակուած վճռեց :

Հէլենաց թագաւորն Անգլիական կառավա-
րութեան կողմէ սիրալիկ կերպիւ հիւրընկալուեր
է Յունիս 16ին (Ն. Տ.) : Կալէսի իշխանն և իշ-
խանուհին, Քէմպրիճի դուքսն, Պ. Կլէտթըն և
Սըր Չարլզ Տիլը սոյն ընդունելութեան ներկայ
գտնուեր են, Նախագահի ատեն քաղաքացեալ
չորսը Յունաստանի բարեբաւօրութեան համար
բաժակ առնալարիւր է : Թագաւորն իր խորին
շնորհակալիքն յայտնել է նոյն համախառն օր-
հայտի ընդունելութեան մասին : Նոյնպէս Կալ-
լէսի իշխանն, և Պ. Կլէտթըն պարագային հա-
մաձայն խիստ համակրելի խօսքեր արտասանե-
ր են ի յիշատակ Յունաստանի :

ԳԱՂՂԻԱ. Երեսփոխանական ժողովն բնա-
կան ժամանակէ ի վեր կըլքազէր ընդհանուր
ներողութեան ինդիւր : Արդէն հասարակայն
ցոյցեր ժողովրդեան այն մասին ունեցած համա-
մտութիւնն կը հաստատէին : Գրեթէ ընդհանուր
կերպարանք առած էր սոյն խնդրին որով կ'ու-
զուէր ընդհանուր ներողութիւն շնորհուի 1870ի
և 1871ի ապստամբութեանց, յանցաւորներու,
նոյնպէս մինչև 1880 Յունիս 19 քաղաքական և
քաղաքական յանցանք գատապարտեալ ան-
ձերու : Ի նպաստ ընդհանուր ներողութեան Պ.
Կամպէլը խօսեցած աղբու և իմաստալից ճա-
րարեց :

Թոյց Հայաստանը, ի՞նչ հրատարակեց այն միա-
համուռ միութեան կողմէ, ո՞վ զինուորեց ամ-
բողջ հայութիւնը թէ՛ այդ թէ՛ կին թէ՛ ծեր թէ՛
մանուկ : ո՞չ աղբիւնն այն ժամանակի Հայ դիւ-
ցազնակն երկուստեք իրարմէ : և հոսկի ու-
րեմն կարող եղաւ փրկել Հայաստանն և Հայու-
թիւնը համայնալից կորուստէն :

Այն ժամանակի Հայ երկուստեք ութեան
մէջ հարկաւ կային եկեղեցականք, վաճառա-
կանք, արուեստագէտք, երկրագործք, և կա-
նայք : Ասոնք հարկաւ ճանաչած էին աղբային
նպատակ մի : առ որ ուղղելով իրենց բոլոր ունի
ու ճգունքը այն մահաբոյր անպարէզ արշաւե-
ցին անձնազութեան անմահ յուսով : Եւ ահա կը
տեսնենք որ վերջնապէս ժամանեցին իրենց նը-
պատակին, որ էր Հայաստանն ու Հայութիւնը
փրկել ընդհանուր կորուստէն :

Այժմ ևս մեր աղբի երկուստեք ութեան
դասուն մէջ ունինք եկեղեցականք, վաճա-
ռականք, արուեստագէտներ, երկրագործ-
ներ, և կանք : Բայց միթէ սոքա աղբային
նպատակի մի պոյնթիւնը բնականաբար են, և եթէ
բնական են, իրենց բոլոր ունի ու ճիգը դէպ
ի նոյն նպատակն ուղղած են, և եթէ ուղղած
են, կը գործեն : Սոյն հարցումներու պատաս-
խան անցաւ գործերն են :

Հաղուադիւտ բացառութեամբ, մեր երկուս-
տեք ութեան թէ՛ եկեղեցական և թէ՛ աշխար-
հական, ըստ մեզ քուէի մէջ են և կը գանդա-
լեն : Տակաւին արթնցած չեն, տակաւին աղբա-
յին նպատակի պոյնթիւն ինչ է, չգիտեն : հե-

ռոյն գրեթէ բոլոր երեսփոխանաց սիրտերն
շարժեց և դէպ ի յայն մեղք : Առաջին նախա-
րար Պ. Յրէսինէի պատճառարանեալ մի ճառին
վրայ, զոր ի լուր երեսփոխանական ժողովին
կարդաց, ընդհանուր ներողութեան որոշումը
իրական դարձած էր : ուստի և Յունիս 11ին (Ն.
Տ.) Պ. Կամպէլը այն նշանաւոր ատենախօսութեան
վրայ ընդհանուր ներողութիւնն որոշուեցաւ
333 քուէով ընդդէմ 140 քուէի : Պ. Յրէսինէ
ժողովին մէջ հրատարակեց ընդհանուր ներ-
ողութեան որոշումը որ է :

Ներում շնորհուած է այն ամեն անձանց որք
1870ի և 1871ի ապստամբութեանց վերաբերեալ
յանցանք գատապարտուած են : նոյնպէս նաեւ
այն անձանց որ մինչև 1880 Յունիս 19 քաղա-
քական և խմբագրական յանցանք գատապար-
տուած են :

Երեսփոխանական ժողովն ծափահարութեամբ
ընդունեց զայն միանգամայն և որոշեց որ Պ.
Կամպէլը այն ատենախօսութիւնն Գաղղիոյ ամեն
գիւղերուն մէջ պաշտօնապէս հրատարակուի :

Պէրլինի Դեսպանախորհուրդ

Յունիս 15ին (Ն. Տ.) նախապատրաստական
նիստ եղաւ, ուր ատենական կազմակերպու-
թիւններն կապարուեցան, և Դեսպանախորհու-
րդին գործելու եղանակին և նիստերու ծրագրին
վրայ խօսուեցաւ : Որոշուեցաւ որ նիստերը ար-
տաքին գործոց պաշտօնատան մէջ գումարուին
և նախապէս թուրքո—հելլենական սահմանա-
դի խնդրով զբաղին, յետոյ ուսումնական
(երկրաչափ) Թանձաժողովին տրուելու տեղե-
կութիւններն պատրաստեն : Սոյն Թանձաժողով-
վին համար կ'ըսուի թէ՛ կամպիլիոս և Թեսաղիա
պիտի երթայ սահմանագիծը որոշելու և կամ
առանց այդ ճամբորդութիւնն ընելու : Պէրլինի
մէջ աշխարհացոյց տալեանից վրայ պիտի կա-
տարէ իւր պաշտօնը : Դեսպանախորհուրդն ա-
ռանց թուրքիոյ և Յունաստանի ներկայացու-
ցիւններու կըկատարէ իւր գործը : Այս երկու
տէրութիւնք իրեւ չաճ ունեցող կողմեր յիշեալ
դատարանին մէջ չեն ընդունուիր : Թէ՛ և արտ-
ուութիւն ունին նստող լիազօրներու միոյն մի-
ջոյաւ իրենց զիտողութիւններն ատենին հա-
ղորդելու :

Ալքանիական միութիւնը հեռապոյով յայտա-
բարձ է Դեսպանախորհուրդին թէ Ալգըն չլի-
տի զիջանի իւր երկիրն մասնահատելու, և կ'ա-
յաչեն որ իրենց ինքեքը նկատողութեան առ-
նուի և դարաւոր իրաւունքներն յարգուին :

անապէս իրենց ունն ու ճգունքն երազական
տեսութիւններով միայն կ'ըբաղին : Թողունք
որ գործքերն խօսին : Ունինք երկուստեք ե-
կեղեցականք, որք փոխանակ ինքզինքնին կա-
տարեւադործելու աշխատելու՝ օրուան ժամերն
կրթութեան թէ՛ երբ պիտի սպաւին, և ան որ ըն-
թերցումին վարժելու կարօտութիւն ունին, և
ամբողջ ցորեկը ի քուն կանցունեն և ամեն օր
եկեղեցւոյ մէջ կակաղելով կարդալու չեն շա-
ռագնիր : Կան որ գրող լեզուի այնքան անճաշկ
են մինչ զի կարգապահին չեն հասկանար այլ
Ս. Ներսէս Ծնորհալի առ դասս քահանայից
ուղղած պատուէրներուն մէջ գրածին պէս զու-
րն ինչպէս խողովակէն կ'անցնի, այնպէս եկե-
ղեցւոյ օրհանգիստ ընկերցուածոց բառերն ա-
նոնց բերանէն կ'անցնին : Յու է մեզ բոլոր
թէ՛ անապարձութեան և փառասիրութեան ո-
գին հեռի չէ այսպիսի ունեցմէ : Բայց երկուս-
տեք ութեան նպատակը այդ չէր : այլ ինչպէս
մեր վերի բացառութիւններէ քաջայայտ կ'ե-
րեի, աղբայինութեան ետեւէ վաղել էր : Եւ
ինչպէս հնարին է աղբը չինել երբ մէկն ինքը-
զինքը կատարեւադործելու չաշխատիր : Նախ
ինքզինքը չինէ, որ օգտակար լինի աղբային
վերաշինութեան :

Այսպէս ահա, աղբային վերաշինութեան
գործը դժբաղդաբար երեսի վրայ է մեր օրերը
և ասոր պատճառն յայտնի է : քանզի երկուս-
տեք ութեան եկեղեցական տարրն անփոյթ է
յամենայնի :

(Շարունակելի)

Տերութեանց համիմատ ծանուցադրին Բ.
Դրան պատասխանալին Յունիս 11 թուով ուղ-
ղուած է Անգլիոյ, Գաղղիոյ, Գերմանիոյ, Ռուսիոյ,
Աւստրո—Հունգարիոյ և Իտալիոյ դեսպանաց :
Յիշեալ պատասխանալին Մոնթէնէկոյի և Հա-
յաստանի բարենորոգմանց խնդիրներուն պա-
տասխանելը յետագային թողով թուրքո—հել-
լենական սահմանաց ուղղութեան մասին կիսով
է այս պաշտօնով սահմանադրուած երթալով
ընդհանուր սահմանագիծին մանրամասնութիւն-
ները կարգադրող Թանձախմբին համար դիտ-
ողութիւն կ'ընէ թէ յիշեալ Թանձախմբին ըստ
օրինի իրաւունք չկրնար ունենալ օրեկից գործի
ձեռնարկել մինչև որ տէրութեանց և Բ. Դրան
մէջ այն մասին համաձայնութիւն պայտօն չլինի :

Մոնթէնէկոյի խնդրոյն վերաբերեալ Բ.
Դրան պատասխանալին տրուել է տէրութեց
դեսպաններուն բայց պարունակութիւնն դեռ
չէ յայտ :

Հայաստանի բարենորոգմանց խնդրոյն հա-
մար դեսպանաց ուղղելու պատասխանալին
մէջ, կ'ըսուի թէ՛ Բ. Դրան որոշած է Հայոց և
ինչպէս խառն բնական դաւաններն շ ժամէ
անկի հեռաւորութիւն չունեցող Նահիէներու
բաժնել : Բրիտանիոյ մեծամասնութիւն պարու-
նակող Նահիէներն քրիստոնեայ Միւտի մի և
չորս քրիստոնեայ և երկու իսլամ ոստիկաններ
պիտի ունենան : Նմանապէս իսլամ մեծամաս-
նութիւն պարունակող Նահիէներն իսլամ Միւ-
տի մի և չորս իսլամ և երկու քրիստոնեայ ոս-
տիկաններ պիտի ունենան : Բրիտանիոյ և իս-
լամ անդամներէ բաղկացեալ վճռադատ ատ-
եան մի : առանց որոշուած տեղ մի հաստատ-
ուելու, բոլոր Նահիէներուն այցելութիւն պի-
տի ընէ միւտիներուն արձակած վճիռները վե-
րաքննելու պաշտօնով : Կը հաստատեն թէ նա-
խարարաց խորհուրդն ընդունել է սոյն ծրա-
գրին սկզբունքն, և Հայաստանի բարենորոգ-
մանց նկատմամբ դեսպանաց տալու պատասխա-
նը պատրաստելու կ'ըբաղի : Կ'ըսուի նաեւ թէ
Բ. Դրան կ'սպասէ եւրոպական Թանձաժողով-
վոյն եւրոպական թուրքիոյ վարչական կանոնա-
դրոց քննութիւնը աւարտելուն : որպէսզի յիշ-
եալ կանոնագրին մէջէն Հայաստանի յարմարա-
գոյն բարեփոխումներով նոր կանոնագիր մի
որտարատէ և Թանձաժողովն քննութեան յանձ-
նէ : Սոյն Թանձաժողովն, որ եւրոպական թուր-
քիոյ համար պատրաստուած վարչական կանո-
նադիրն քննելու պաշտօն ունի, վերջին օրերս
իւր նիստն ըրաւ Մեքէէ պի Սուլթանի մէջ :

Նորին կայսերական վահանաւորութիւնն մե-
ծագումար դրամ պարգև զրկեց արտաքին
գործոց նախարար վոն Բ. Սպէտին բաշային ի
նշան իւր բարձր գոհունակութեան :

Վսեմա. Յարութիւն Պէյ Տատեան այս երկ-
րորդ անգամ արտաքին գործոց նախարարու-
թեան խորհրդական անուանեցաւ : Այս առթիւ
Կ. Պոլսոյ ոչ միայն աղբային այլև օտարալեզու
թերթերն մեծ գովութեամբ կը խօսին վսեմա.
Կարութիւն Պէյի բարձր տաղանդին վրայ : Որ
իւր կրթութիւնն յեւրոպա աւարտէ զինի ան-
միջապէս մեծ պաշտօններ վարելու կոչուած է :
Սրգէն շատ կանուի հասակին մէջ Բարիդի Օս-
մանեան դեսպանատան առաջին քարտուղարի,
Ժամանակ մ'ալ դեսպանական պաշտօնն վա-
րած է : Կ. Պոլսի դաւանալով հետզհետէ Պետա-
կան խորհրդոյ անդամ, Հառաբակային շինու-
թեանց խորհրդական, Հանքաճի և անտառաց
մնորէն, Բէրայի քաղաքապետութեան նախա-
գահ և ի վերջոյ արտաքին գործոց նախարա-
րութեան խորհրդական անուանեցաւ : Արդէն
Պոլսի Կ. Պոլսի լրագիրն և ուրիշ թերթեր ևս
վսեմա. Յարութիւն Պէյին համակրելի ձերքերն
արժանապէս ներբողած են, զոր ամենամեծ
գոհութեամբ կարգադրած են աղբայինք :

Պարսից վեհ. Շահն Աբուլու և Արեգական
չքանչան շնորհեր է վսեմա. վահան է փէնտին,
որ դատական նախարարութեան միւնիթէյար է :

